

ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԻՆ

Ե. ԹՈՐՕՏՅԱՆ

Նամակ կամ որ եւ է

գրութիւն պետք է ուղղել առ

Տնօրին, ԱՐՇԱՆՈՅՍ քաղաքի

ԳԱՇԻՐԷ (Նախախառնի)

Թիւ.


E. TOROSSIAN

Direc. propr. du journal armenien

ARCHAEOLOGIE

LE CAIRE (EGYPTE)

Boite Postale No.



Լ Ր Ա Պ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ՉԱՄԱՐ

Տարեկան ողջ դասիկ. 60

Վեցսկիւնայ » 35

ՅԵՍԱՐ ԵՐԿԻՐՆԵՐ

Տարեկան Ֆրանկ 20

Վեցսկիւնայ » 12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՆՈՒԿ  
Եւ թղթատարի ծախքը  
Խնայողութեան վրայ է:

Ազգայնութեան ուղղուած  
գրութիւնք էջ 5/15 տրուի

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆԷ

Կանխիկ վճարեալ

ՈՐԲ ՍԸ

Վերնագիրս շատերուն մտածել տայ  
թերեւս թէ՛ ինչո՞ւ համար հաւաքաբար  
«Որբեր» ըստած չ'է, քանի որ հիմայ ա՛յն-  
պիսի ժամանակի և պատահածեան մը  
տակն կը գտնուինք, որ փոխանակ որբ մը  
ըսելու՝ պատշաճագոյն է որբերու մասին  
ընդհանուր առմամբ խօսիլ և գրել:

Ասոր պատճառը շատ պարզ է, այ-  
ժամ որբերով զբաղողներու քանակը - ու  
քակը մէկ կողմ մնայ - այնչափ շատցած է,  
որ Խամայիլիէի Մենակեացը անգամ, իր  
Անդրոս ձեռքով կ'ուզէ որբերու հարցին մէջ  
նետուիլ, ու թէ՛ կարելի է, ատով անուն  
մը չ'ընել իրեն և իրեններուն համար...

Ասիկայ բաւական զօրեղ պայման  
մ'է, որ որբերու հարցը կարճ ժամանակ  
կի մը համար ուրիշներուն թողունք և  
մենք մէկ որբով միայն զբաղուինք:

«Առջաջոյս» ի պատ. ընթերցողներն,  
պէտք է որ յիշեն թէ՛ վերջերս Արաբկիրցի  
սեղանաւոր մը, աշխարհի մեծամեծ հոգե-  
րէն ազատելու համար, այս ցաւերու հո-  
վիտէն մեկնեցաւ:

Հանգուցեալը իր չափազանց սնտեսա-  
գիտութեան և խնայողութեան շնորհիւ,  
քանի մը հազար Ս. Գէորգներու (անգղ-  
ոսկի ըսել կ'ուզուի) գումար մը կը թո-  
ղու իր երկու գտտերաց. և երրորդ ու վեր-  
ջին կողակցէն ալ, մանչ զաւակ մը կը թո-  
ղու, ժառանգակից միւսներուն:

Ո՛չ հանգուցեալը, ո՛չ իր կողակիցը,  
ո՛չ գուտտերները և ո՛չ ալ որբը զմեզ պի-  
տի հետաքրքրէին, եթէ այդ հազարներուն  
չուրճը գումարադններուն առջև, մեր առաջ-  
նորդարանի և եկեղեցւոյ պաշտօնէից ան-  
հեռատեսութիւնը և տգիտութիւնը յ'երևան  
չ'գար: Թէ ի՞նչպէս:

Հանգուցեալը քանի աւելի տարիներ  
առաջ բողբքականաց փարախը գիմած էր:

(Մեր նպատակէն դուրս է նաև՝ զբա-  
ղել անձի մը ունեցած գաղափարներով և  
զգացումներով: Ըլլա՛յ կրօնական, ըլլա՛յ խղճի  
այլ տեսակէտներով. ամեն ինքզինքը գիտցող  
մարդ ազատ է, ինչպէս թուուներ օգին մէջ:)  
Սակայն հանգուցեալոյն արդի կողակիցը հա-  
յաստանեայց եկեղեցւոյ զաւակ և իւր հա-  
ւատքին մէջ հաստատուն, մինչև վերջին  
վայրկեանը անխախտ պահած էր դէպի իւր  
եկեղեցին զբացած սէրը և հաւատարմու-  
թիւնը և իր մանչ զաւակը 6-7 տարիներ առաջ

տեղւոյ Ս. Աստուածածին եկեղեցին տարած  
մկրտել տուած էր. ինչպէս նաև ուրիշ պա-  
րագաներու մէջ ալ՝ երբ իր զաւակին համար  
պէտքը զգացած էր եկեղեցւոյ խորհրդոց,  
գիմած էր հոն. և իւր հոգեկան մխիթա-  
րութիւնը գտած:

Եկեղեցւոյ և առաջնորդարանի պաշ-  
տօնեաները սակայն, ուրիշներու անծանօթ  
պատճառներով՝ զանց կ'ընեն մկրտուած  
երախային անունը արձանագրել առաջնոր-  
դարանի տուամարներուն մէջ:

Այժմ որբին մայրը, որ պէտքը կ'զգայ  
իր և որբին իրաւունքները իր պատկանած  
առաջնորդարանին միջոցաւ կարգադրել  
տալ, զարմանօք կը տեսնէ որ երախային  
անունը արձանագրուած չ'է առաջնորդա-  
րանի տուամարներուն մէջ - գոնէ մեզի ըս-  
ուածները այսպէս են - և աղբային առաջ-  
նորդարանը՝ կարողացած չ'է վաւերացնել  
թէ՛ որբը մկրտուած և արձանագրուած է  
իր տուամարներուն մէջ և իր իսկ պարտակա-  
նութիւնն է, անոր ապագային սպաննացող  
վտանգներուն առջևն աւանդ:

Ի՞նչ կը կորսնցնէ առաջնորդարանը իր  
այս անհոգութեան և անհեռատեսութեան  
շնորհիւ. Պարզե՛նք:

Առաջնորդարանը տեղական կառավա-  
րութեան արտօնեալ է, որ իր աղբին ան-  
անհատներուն մէջ երբ մահ պատահի և  
հանգուցեալը ժառանգորդներ ունենայ,  
այն ատեն առաջնորդարանը հեռաւոր կամ  
մերձաւոր ժառանգներու իրաւունքները  
պաշտպանելու համար, օրինաւորապէս գրի  
առնելով հանգուցեալին գոյքերը, ուղղա-  
կի իր պաշտպանութեան տակ առնէ. մին-  
չև որ ժառանգորդները զան հասնին, եթէ  
հեռաւոր տեղ մը կը գտնուին: Իսկ եթէ  
իր գտնուած տեղւոյն մէջ անչափահաս որ-  
բեր ունի հանգուցեալը, հասնին չափահաս  
տղթեան տարիքին և իրենց իրաւանց սէր  
լինին:

Այս ամենուն փոխարէն առաջնորդա-  
րանի սնտուկը 5-10 և աւելի առ հարիւր  
գաղթմիջ էլն. կ'առնէ. Լա՛ւ:

Մեր խնդրոյ առարկայ հանգուցեալոյն  
որբն ալ, որ արձանագրուած ըլլալու պա-  
տիւր վայելած չ'է, իւր հօր հարստութեան  
5-6 հազար ոսկւոյ հարստութեան մը պի-  
տի տիրանայ. և եթէ հայոց առաջնորդա-  
րանը այս պահուս գործադրել գիտնար իր  
իրաւատութիւններն, ըսել է աղբային սըն-  
տուկը քանի մը հարիւր ոսկի ստանալու ի-  
րաւունքը պիտի ունենար:

Եւ այսպէս կարող պիտի ըլլար իրենցմէ

աւելցածէն, քանի մը աղքատներ աւելի  
խնամել. իրենց գիմող ազքատ ազգայնոց  
սակացոյցի խտուր գործադրութիւնը չ'պա-  
հանջել. աղքատ մեռելներն առանց պա-  
տանքի չ'թաղել տալ. և վերջապէս՝ հայ  
ժողովրդեան գժգոհութիւն պատճառով  
չատ մը գանգատներու առաջն առնուլ:

Եթէ մեր առաջնորդարանի ելեմուսքն  
ալ չ'հետաքրքրէր զմեզ, դարձեալ մեր  
գրչին ծայրը խոշոր հարց մը կը ներկայա-  
նար առաջնորդարանին ուղղելու թէ՛ ի-  
րենց բոլոր գործերն ալ այսպէս բարձի  
թողի վիճակ մը ունին արդեօք թէ՛ օրի-  
նաւոր պատճառներ ունին ցոյց տալու զր ի-  
րենք իւր աղբի մը առաջնորդարանը, զար-  
տաւոր չեն զգար ինքզինքին պաշտպանելու  
իրաւունքները որբի մը՝ որ զարգանալէ և  
խելահաս ըլլալէ վերջ, անշուշտ իրենց ան-  
տարբերութեան գէ՛մ բողբքելու բացարձակ  
իրաւունքը պիտի ունենայ:

Ե.

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԷՆ

Նիւ - ԵՕՐԻ 28 Մայիս 1900

ՄԻՆՉԵՒ ԵՐԲ

1895 ի պաշտօնական ջարդերէն վերջ,  
թշուառութիւնն իր լայնարաց թեւերով ա-  
ւելի անբաւարար գրկեց Հայը. Թուրք կա-  
ռավարական շրջանակներու մէջ օրէնքները  
չարափոխուիլ սկսան. հարստահարութիւն. բռա-  
նաբարուս կեղեքուս. աւար. սպաննութիւն եւլն.  
օրուան խնդիր դարձաւ Հայերու կողմէն  
բարձրացած անհաւար բողբքներու արդար  
ձայները, մութ ու խոնաւ բանտերու ցած-  
կուկ յարկերուն տակ արձագանգ կ'առնուին:  
Անկուրք գիւղերու եւ աւաններու մէջ ան-  
լուր ոճիրներն ու սրբապղծութիւնները տա-  
կաւին անարգել կը շարունակուին:

Հայ գիւղացին չուար ու վարան, մոռ-  
նալով ամեն ինչ, կը թողու տուն ու անղը.  
եզն ու գութանը, ոչխարն ու արօտատղին  
եւ լոկ հողին ազատելու նպատակաւ կ'ուղ-  
ղուի դէպի իր մօտ քաղաքը:

Խեղճ գիւղացի, կարծելով թէ այլեւս հան-  
գիտ չունչ պիտի առնու. սակայն քիչ օ-  
րէն բոլորովին յուսախար կը գտնէ ինքզինքը:  
Այժմ՝ զուրկ բոլոր ունեցածներէն, զոնք գուռ  
կը շրջի պատատ մը չոր նաց հայթայթե-  
լու: Անիկայ ձևերը պատտաւ ցնցոտիներով  
ու բոկոտն ման կուգայ փողոցներուն մէջ.  
չ'ունի տաքուկ պատապարան մը. անոր բնա-  
կարանը փրկած է, ձիւնն ու փութը պատ  
մուտ կը գտնեն անոր մէջ. Այն խարխուլ  
բնակարանի երթիքին բացուածքներէն, զարնան  
յորդահոս անձրեւներու տղուտ հոգանքը  
անխնայ կը թրջեն խեղճին հազար եւ մէկ

կտորներով կարկուտած նստր վերակեր. երբեմն ալ անբողջ յարկը խոնարհելով, իր ծանրութեան ներքեւ պատասխարեալը՝ յաւիտենական քունը կը ննջէ: Անա ողբայի գիւղացուին հանգիստը քաղաքին մէջ ալ:

Ո՛հ, մինչեւ ե՛րբ... մինչեւ ե՛րբ այսպէս պիտի շարունակուի. մինչեւ ե՛րբ սպասենք ու գունաւոր գայլերու վտանակներուն յարձակումներէն ետ նահանջներ: Հերթը չ'է՞ ճշգրտութեամբ անխիղճ քիւրտերու, անգութ թուրքերու բռնութիւններուն տակ. թողունք որ նորանոր շղթաներով կապեն մեզ անքակտեալի: դեռ չը լրացա՞ւ ժողովուրդը, չ'հասա՞ւ ցանկալի օրը ՀԱՄԵՐԱՇՈՒԹԵԱՄԲ ԳՈՐԾԵՂՈՒ...:

Ո՛հ, արդեօք ե՛րբ պիտի փչէ ՄԻՈՒԹԵԱՆ փողը ու արկն հայ ձեռք ձեռքի տուած յառա՛ջ, դէպի յառա՛ջ անցած գործելու որպէս մէկ անձ ու մէկ նպատակի հաւար. այն՝ ինչ որ ամենուս բաղձանքն է, որուն կարօտովն ենք ու անհամբեր կ'սպասենք անոր: Ըստ իմ այդ յաջողութիւնը կ'սկսի « միութեան » քաղցրահնչիւն շփոթը հնչեցնելէ անմիջապէս ետքը. եթէ այսպէս, ա՛ն. այն ատեն շուտով կը բացուի ցանկալի ԱԶԱՏՈՒԹԵԱՆ պայծառ արշալոյսը:

ՅՈՒԱԿ

ԱԻՏԱՐԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՌՈՂՁԱՊԱՀԱԿԱՆ

ԹՈՒԹՔ ԿԱՄ ՏԵՆՍԵՏՍՈՒԹԻՒՆԻՔ

(Մայաւար)

Տեւատեսութիւնք թափանին ստորին ծայրի երակներուն ընդլայնումներէն յառա՛ջ կուգան Սքրանին չըջապատին վրայ արիւնային ուռոյցներ կը կազմուին, եւ որ մերթ արիւնթութեան տեղի կուտան, նարնաւանդ բնական պէտքը հողացած պահուն. հիւանդութեան այս տեսակը ծորուն տեսակներէն կ'անուանուի, որ ներհակն է ցաւաւ կառն անարիւն տեսակներէն:

Որքան որ այս հիւանդութիւնը վերաբուժական արտարանութեան մէջ զսաստորուած է, բայց չ'է արտաբուժած ներքին արտաբուժանութեան գրկէն, սերտ յարաբերութեան մէջ գտնուելով բազմաթիւ ներքին հիւանդութիւններու հետ. եւ որ աւելի բանաւոր պիտի ըլլայ կարծեմ միշտ, ներքին հիւանդութիւն մը հաւանաբար զայն:

ԱԻՏԱՐԱՆԱԿԱՆ ԱՆԴԱՄԱԳԻՏՈՒԹԻՒՆ. — Հիւանդութիւն մը լաւ ուսումնասիրելու, եւ իր յատկութիւնը ու բնախօսական երեւոյթը ճիշտովն հասկնալու հարկար, անհրաժեշտ է վարակուած մասին անդամագիտութիւնը կատարելապէս գիտնալ, եւ դարձմաններն ալ ըստ այնմ անօրինել:

Թափանին ստորին մասը ճոխ երակահիւսակով մը ակօսուած է, երկրորդական բերանկցութիւններով կազմուած. Ա. — մայրը երթող վերին թանջական շնչերակները. Բ. — ենթորովայնին մէջ իրարու միացնող միջին, եւ Գ. — ստորին թանջական շնչերակները: Այս երակացանցը կը դառնուի բնական եւ անդամագիտական հանգամանքներու մէջ՝ որք գերատիճանաբար կը դիւրացնեն անոր ձգտումը:

Անդամագիտութիւնը մեզ կ'ուսուցանէ թէ՛ սրբանին մասնաւոր ու կարեւորագոյն յօրինուածը՝ սեղմիչ զնդերներուն ընդմէջէն, վերին թանջական շնչերակները ստորին թանջական շնչերակներուն հետ շողորդակցութեան մէջ զնոց բերանկցութիւններուն անցքն է եւ որ ստորինները վերիններուն նկատմամբ, իրական խտորման ուղիներ են, կղզիանք արտաբուժու հաւար մեծ ձիգ ի գործ գրուած ատեն՝ խոչակարբերանը կը փակուի, եւ ստուծանին ծայր աստիճան կը կծկուի. բոլոր մայրի յօրինուածին մէջ ճնշուած խիստ կը բարձրանայ, եւ վերին թանջական շնչերակները խոժող արիւնը չ'կրնար հետեւիլ մայրական ձաղթուն, յայնժամ կ'ուղղուի դէպ

ստորին թանջական շնչերակները, որոյ անջեւ խուսափումն ուղի մը կը բանան, պայմանաւ որ արտաքին սեղմիչ զնդերը չ'կծկուի եւ որ ի վերջոյ կ'անցնի ենթորովայնի յօրինուածին մէջ: Բայց եթէ փակուի խուսափումն ուղին, ինչպէս յաճախ կը պատահի սպաւառումի գործ եւ անոգուս փորձերու պահուն, վերին թանջական շնչերակներուն մէջ սաստիկ արիւնակուտակում յառա՛ջ կուգայ, եւ եթէ այս վիճակին ենթարկուող անձը արտաքին ու նախապատրաստ կացութեան մէջ կը դառնուի արդէն, այս արիւնակուտակումը ընդլայնուան, յետոյ կայունութեան կամ լծացան. եւ հուսկ ուրեմն անտեսական ուռուցքներու արտադրութեան կը յանդի:

ՊԱՏՃԱՍԻՔ. — Այս ներքից հիւանդութեան շարժառիթները կրնան ըլլալ. շատակերութիւն, չափազանց ճոխ ու գրգռիչ կերակուրներու գործածութիւն՝ որ չարաչար կը յոգնեցնէ լիարդը, եւ մայրին յօրինուածը, մասնաւոր « ստոնց » որ այս յոռի անդամութեան վերջ ծալապատիկ կը հանգչին ասանք մէկ անկիւնը, եւ կամ գրառնեակներու մէջ նստուկ երկարատեւ աշխատութիւններ ընելու սովորուած են: Յօդատարութիւնը, իրաւամբ գերազանցապէս սերնդական հիւանդութիւն, անդամութեան նուազմամբ յառա՛ջ կ'ուղ արտաբուժան կարեւոր մէկ հանգամանքը կը ներկայացնէ, որք կազմութեան մէջ բորակածը նաւոր նիւթերու կիզման արգելք կ'ըլլան, եւ հիւանդին մէջ արիւնակիզական թթուութիւն մնայուն վիճակ մը կը հիմնեն, որուն արտանշական բացատրութիւնը կը փոխուի ենթականերուն կազմութեանց ու արտադրութեանց հարեւան, անոց մէջ փոխի ի փոխ յառա՛ջ բերելով անբար, անոնարողութիւն, ծանրաշնչութիւն, մազձայնի կառ երկիւղային քարահարութիւն, մարմնազայլար, եղձատեղ, յօդացաւ եւ վերջապէս տեսատեսութիւնը:

Ժառանգականութիւնը, պնդութեան ու նակութիւնը. շարունակ անհոգաբար ծակ տիտ գործածելը. յաճախակի ու երկար պրտոյաները, ձեւեւ եղանակի մէջ ստէպ ձիով ձաւքորդութիւնը եւ հետեւաբար սաստիկ ցըրտառութիւնը խորտ ու բորո ուղիներէ սասանող կառքով հանապաղ երթեկեղութիւնը, նստելու պահուն՝ անզգուշաբար, յանկարծ թոռին վրայ մարմնոյն բոլոր ծանրութեանը իջնալը, անբարխառնօրէն մաքրագեղ, եւ մանաւոր իբր լուծողական դեղ չափազանց հալուէ ( բոյսէ հանուած ուտին ) գործածելը, կրնան ստոյգ ու գլխաւոր պատճառներ նկատուիլ այս հիւանդութեանը: Տեսատեսութիւնը շատ անգամ ալ լիարդի հիւանդութիւններու մէկ խառնակումն են:

ԱԻՏԱՆԻՔ. — Բուռն ձգտում ու ծանրութեան զգացում սրբանի մուտքին մակերեսին վրայ, լորձնահեղուկ ապաւառումի ատեն՝ որ կարճորակ, այսուցիկ եւ մերթ մանրակազոյն է, մեծ աղիքի ընդլայնում կղզիանքի մնայութեան պատճառաւ: Կղզիանքը բոլորչի եւ կարծր ձեւ մը կ'ստանայ այս պարագային, ու խիստ զժուարկութեամբ կ'արտաբուժուի: Հիւանդը նստատեղոյն մէջ մտնուի եւ ուռեցք կ'ըզայ՝ որոց կ'ընկերանան զուրս երթալու մարմնին ու պնդութիւնը: Արիւնային հաւաքման արգասիք է այս երեւոյթը՝ որ սկիզբները զոգցես կ'անհետի, սակայն փոխի ժառանգակալիցներու մէջ վերստին երեւնալու պայմանաւ՝ զոր ստէպ կանխարանան միաւրի վարակուողները եւ որ արիւնթութեանը կամ չոր կսկծանօք կը վերջանայ: Արիւնահոտումներէն յետոյ միայն կը կազմուին տեսատեսական ուռոյցները՝ որք երբեմն սրբանին արտաքին մակերեսին վրայ կը տեսնուին, եւ երբեմն ալ իրոր՝ որ նուազ կսկծեցուցիչ են քան արտաքինները: Սրբանին անցքը չըջապատող այս ուռուցքներուն հաւաքումը անկանոն այսուց մը կը ձեւացնէ: Ուռուցքները արեամբ լի եղած ատեններն մանրակազոյն են: Տեսատեսական հոտումը յաճախ իրականապէս

կը յայտնուի անոգուս ճիգիբու ատեն, անանց կանխաւ բացորոջ հոտում մը ունեցած ըլլալու, որ կ'ապացուցանէ արիւնակուտակման կամ արիւնայի ու ստուար ուռեցքներու գոյութիւնը՝ որք գառնապէս կ'սկսին նեղել սրբանը: Հոտող արիւնը կրնայ ըլլալ բազմայորդ կամ նուազ. մերթ կաթիլ առ կաթիլ կը ծորի, եւ մերթ ուժգնութեամբ կը ցայտէ կառ լորձնախառն կը հոսի:

(Շարեւ.) Ուսանող Պալի Առողջապահական Հաստատութեան մէջ՝ Կ. Գ. ՈՒՋՈՒՆԵԱՆ

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆԻՔ

ԿԻՊՐՈՍԻ ԿՈՅԱՐԱՆ ՈՐԲԱՆՈՅԻՆ ՅՈՒՑԱԿ Գ.

Որբասիրաց Ընկերութեան Պատ. Գործադիր Ժողովը, Կիպրոսի Կրթարան-Որբանոցին ինպատակ եղած նուիրատուութեանց գանձման հետեւեալ ցուցակը զրկած է մեզ ի հրատարակութիւն:

Table with 2 columns: Name and Amount. Includes entries like 'Պ. Յուցակի գումար. զըշ. ողջ 2512 50', 'Որբասիրաց Ընկերութեան կողմէ զրկուած, առ հաշիւ թատերական ներկայացումէ գոյացած հասոյթին. 1560', 'Մեծ Տիարք Եղբարք Եագուպեան 195', 'Սիվրիսարեան. Ազնաւորեան և Ընկ. 48 75', 'Տիար Մկրտիչ Պալքճեան 20', 'Օհաննէս Մէմբճեան 20', 'Գումար զըշ. ողջ 3356 25'

Ի դիմաց Գործ. Ժողովոյ Որբասիրաց Ընկերութեան Հայոց Ատենադպիր Ատենապետ ԱՊԱՀ ՊԵՏՐՈՍԵԱՆ Ա. Մ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ լուր կը տրուի թէ՛ Լսարան - Ընթերցատան անդամակիցներէն քանի մը անձեր, նկատելով որ թէ հրատարակային և թէ մասնաւորներու մէջ Լսարան-Ընկերութեան նկատմամբ շատ աննպաստ զրոյցներ կը շրջին, նոյն ընկերութեան հիմնական կանոնագրի տրամադրութեան համաձայն « Իրաւարար Ատենին գրաւոր բողոք կը բաւանան. ընկերութեան հաշուական խնդրոց և այլ զեղծումներու առաջին առնելու համար:

— Սերաստացի Հայոց Շահասիրական Ընկերութեան Ընդհանուր Ժողովոյ դիւանին կողմէ նամակ մը ուղղուած է թերթի ստորինութեան, որով կը ինքզին ծանուցանել թէ՛ Սերաստացի Հայոց Շահասիրական Ընկերութեան մէջ ո՛ր և է միջադէպ տեղի ունեցած չ'է, ինչպէս որ գրուած էր Առշալոյս ի 79 թ. թուոյն մէջ:

Սերաստացի Հայոց Շահասիրական Ընկերութեան դիւանին սոյն գրութիւնը ըստանալէ վերջ, մեր հետազոտութեանց իբր արդիւնք տեղեկացանք թէ՛ արդարեւ փոքրիկ միջադէպ մը տեղի ունեցած է համանուն ուրիշ ընկերութեան մը մէջ, սակայն խնդիրը համախոհութեամբ լուծուած ստացած է արդէն նոյն ընկերութեան վարչական ժողովոյն մէջ:

Մեծօրայ Տիրջօնարիի մէջ հետեւեալը կը կարգանք:

«Բ. Խտիվը Լօնտրայի մէջ հրապարակային տօնախօսութեամբ մը պիտի յիշատակէ թէ՛ Եգիպտոս Սուլթանին կը պատկանի, (° °) որուն պատճառաւ ուղղութիւն և հաւատարմութիւն կը պարտի անոր:

Կ. Պոլսոյ և Գահիրէի միջև եղած բանակցութիւններն, ենթադրել կուտան թէ՛ ասոնք իրապէս վերջնական լուծում մը պիտի ստանան, երկուքի մէջ Սուլթանին և Բ. Խտիվին տեսակցութենէն վերջ:

— Ռիւթէրի գործակալութեան Պոլսոյ թղթակցին մէջ հեռագրին նայելով, Բրէթորիայի գրամատն առթիւ Սուլթանը Յունիս Տին շնորհաւորական հեռագիր մը ուղղած է Վիզթորիա թագուհւոյն:

Գահիրէի տեղական շրջանակներուն մէջ նախաձեռնութեամբ շատ մը երեւելի պաշտօնատարներու հանգանակութիւն մը բացուած է, որուն արգիւնքով նուէր մը պիտի մատուցուի Սուլթան Համիտին իւր գահակալութեան 25 թգ. տարեդարձին առթիւ, և որ քիչ օրէն Եգիպտական պատգամաւորութեան մը միջոցաւ Պոլիս պիտի զրկուի:

Տեղի ունեցած նախնական հաւաքումներու մէջ, մի քանի անձնաւորութեանց կողմէ առաջարկուած է, որպէսզի թանկագին քարերով զարդարուն սակեզօծ սուր մը զրկուի:

Իսկ ուրիշներ ալ առաջարկած են, ճոխ կազմուած, ազամանդակուռ կախարչով Գուրանի մէջ օրինակը զրկել. հետեւաբար մեծամասնութիւնը համաձայն է սուր մը և Գուրան մը միանգամայն ուղարկել իյիշատակ այն բազմաթիւ ժողովրդին կորստեան որոցմէ ոմանք իսլամութեան սուրովը և ոմանք ալ Գուրանովը յաղթուեցան:

Հ Ն Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Լոնտրա 16 Յունիս. — Անգլիական թերթերը կը ծանուցանեն թէ՛ Պօքսթըրները Փէքինի կաթողիկէ Մայր եկեղեցին, ինչպէս նաև գետապաններու ամարանոցները կրակի տուին:

Քրիստոնէութեան դարձած տեղացիներն և երոպացաց ծառաները կոտորեցին:

Թիէն - Չինի երեք եկեղեցիներն ալ հաւասարապէս կրակի տրուեցան:

Յօքօհամա 16 Յունիս. — Ճարտնական թերթերը կը պնդեն թէ՛ պէտք է փոխարինութիւն մը պահանջել Փէքինի գետապանական կնքապահին սպանմանը համար:

Ճարտնական ութը պատերազմանաւեր թա - Գու զրկուած են:

Թիէն - Չին 16 Յունիս. — Չինական զօրքերու բազմաթիւ խումբեր ճամբայ ելած են Փէքին երթալու համար. ուրիշ խումբեր ալ Թիէն - Չինի և Թա - Գուի կէս ճամբան հասած են:

Կ'ըսուի թէ՛ Փէքինը պաշտպանողներուն թիւը 100,000 ի կը հասնի:

Քաղաքին դռները դոց են և անոնց պաշտպանութիւնը յանձնուած է թնդանօ աճիգ զօրաց:

Բարիզ 16 Յունիս. — Ն. Վ. Իշխան Մուհամմէտ Ալի, նախագահեց Թիէքատէ:

Րօյի Եգիպտական պալատի բացման հանգիսին:

Բարիզ 17 Յունիս. — Թիէն - Չինի Գաղղիական գետապանը կը ծանուցանէ թէ՛ տեղացի բողոքական միսիօնարները այրուեցան:

Թօնքինի Գաղղիական զօրաց խումբը ամսոյս 25ին միայն Թա - Գու պիտի հասնի, իսկ Գաղղիայէն եկած խումբերն Յունիս Յին:

Չորս նաւատորմի մեկնելու հրաման տրուեցաւ, ծայրագոյն աշեւէքի ուժերը զօրացնելու համար:

Ճարտնական բազմաթիւ խումբեր Թա - Գու հասած են:

Շանհայ 17 Յունիս. — Հիւսիսի հետ ամեն հեռագրական հաղորդակցութիւնը դադարած են. գետապանները այս պահուս վիճարանութեան մէջ են, եւրոպացոց ստացած առանձնաշնորհումներու մասին բռնելիք ուղղութեանց համար. սակայն Փոխարքան անոնց պաշտպանութիւնը ապահոված է:

Ամերիկեան երկրորդ զօրաբաժին մը Մանիլայէն մեկնած է:

Լոնտրա 18 Յունիս. — Ամսոյս 14ին Թայվայ Փէքինէն կը տեղեկանայ թէ՛ նոխորդ օրը ծանրակշիւ շարժում մը տեղի ունեցած է օտարականներու դէմ Գաղաքին ամենագեղեցիկ շէնքերէն մէջ քանիներն կրակի տրուած են, հարիւրաւոր քրիստոնեաներ և քրիստոնէից ծառաներ սպաննուած են:

Ճարտն 2,000 զօրք կը զրկէ գէպի Չին,

Լոնտրա 18 Յունիս. — Նախագահ Քրիւկէրի զօրաց մեծամասնութիւնը Նէլսըրուիթի մօտ դէպի Ալքմար նահանջած է:

Բարիզ 18 Յունիս. — Յունան - Սէնի (Չինաստան) Պրանսական հիւպատոսը կը հեռագրէ թէ՛ Պօքսթըրները խել մը Պրանսացիներ ձերբակալած են և որոնց տուները կողբալու և կրակի տուած են:

Պ. Տէլքասէ Բարիզի Չինական գետապանէն խնդրած է հեռագրել Յունանի փոխարքային թէ՛ զինքը պատասխանատու կը կը ճանաչէ Պրանսացիներու կեանքին:

Եւրոպական զօրագուհւորը որ Փէքին զրկուած էին Թիէն - Չին վերադարձան:

Թա - Գուի բերդերը ուժակոծեցին եւրոպական մարտնաւերը որոնք կրակ ըրին բերդերու վրայ և զանոնք փլցուցին:

Չրոյց կը շրջի թէ՛ երկու անգլիական նաւեր ծովամոյն եղած են:

Լոնտրա 18 Յունիս. — Ապտոմաթութիւնը կը ծառայի Յունանի ներսերն ալ Պրանսական հիւպատոսը, Պ. Պրանսուա և ուրիշ բաշմաթիւ եւրոպացիներ բանտարկուած են. Գաղղիական և անգլիական հիւպատոսարանները կրակի տրուած են: Թոնքինի Պրանսական զօրախումբերը օգնութեան կը փութան:

Լոնտրա 18 Յունիս. — Լօրտ Ռօպըրթս ամսոյս 16 թուականով կը հեռագրէ թէ՛ 14,800 Պօքսթըր յարձակած են Չանտ-Ռիվըրի վրայ բայց ետ մղուած են զօրավար Նօքսի կողմէ որ Քրոնշլատէ հասած էր հոն: Գնդապետ Սէյմուր և երկու զինւոր սպաննուած են. 1 սպայ և 8 զինւոր վիրաւորուած:

Լօրտ Ռօպըրթս Բրէթորիայէ կը հեռագրէ թէ՛ զօրավար Պատըն-Բուէլ հոն հասած է երեկ:

Հ Ա Յ Ի 41 Ձ Ա Լ Ա Կ Ա Յ

— Լէվի Պրիսօն Գանատացի, 70 տարեկան կը բնակի Թօրսթէր գիւղին մէջ. իւր 41 թգ. զաւակին ծնունդը ողջունեց:

Լէվի Պրիսօն երեք անգամ ամուսնացած է: Իւր առաջին կնոջմէն 16 զաւակ ունեցած է, որոնց 12 ը երկուորեակ են. երկրորդ կնոջմէն 14 զաւակ և երրորդէն 11 մրայն: Այս ամբողջ գումարէն միայն 35 զաւակները ողջ մնացած են. և տակաւին անոնցմէ 20 ը ամուսնացած և այդ 20 ամուսնացեալ զաւակաց 8 ը զաւակներն ալ ամուսնացած են: Այնպէս որ, այսօր Պրիսօն հայր և զուլի է 124 զաւակներէ թոռներէ թոռորդներէ բազկացած ընտանիքի մը:

Պրիսօն իւր երիտասարդութեան ժամանակ իւր առաջին կնոջը հետ Գանատայէն փախած է և իւր ամուսնութեան առաջին տարին 3 զաւակ ունեցած է և երկրորդ տարուան մէջ 2 զաւակ. որոնք տակաւին կ'ապրին:

Ամերիկայի ազատութեան պատերազմներուն մասնակցելէ յետոյ, Պրիսօն իւր հայրենի բնակարանը վերադարձած է և նոյն օրէն ի վեր զաւակներ ունենալէ չ'է դադարած:

Երբ Գիլլիսկի քաղքէն ելաւ Թօրսթէր գիւղը հաստատուելու համար, այս գիւղի բնակիչները տեսնելով մանկանց բազմութիւնը, կարծեցին թէ՛ իրենց գիւղին մէջ որբանոց մը պիտի հաստատուի:

Պրիսօն բոլոր կեանքը հողագործութեամբ անցուցած է, տակաւին իր ուժը ու կորովը տեղն է և միշտ ինքը կը մշակէ իւր հողերը. իւր խօսքին նայելով տարիքը 70 էն աւելի է, սակայն կ'երեկ թէ՛ ինքն ալ ապահով չի գիտեր իւր տարիքը արդէն ինքն իսկ 18 եղբօր անդրանիկն է եղեր:

— Ս. Հայրապետի ծննդեան ութսուներորդ տարեդարձին առթիւ, Ռուսաստանցի Տիկին Նագիրեան 1250 թուրքի Ն. Ս. Օժութեան տրամագրելի ըրած է, որբանոցի մը յատկացնելու համար:

Ս. Հայրապետը Վանայ Սաղնապատու Ս. Իրիգոր վանուց իգական որբանոցին յատկացուցած է այդ գումարն, ուր նոր որբուհիներ պիտի աւելցնեն:

— Վիէնայի միաբանութեան Պօլսոյ երիտասարդ անդամներուն և Վիէնայի երիցագոյն անդամներուն մէջ երկպառակութիւններ կան կ'ըսուի:

Ասոնց շարժառիթն է եղեր, Վիէնայի միաբանութեան, վանական սովորութիւններու մէջէն հայկական ձևերը լատինականի վերածել ուղեղը: Պօլսոյ հատուածը ասոր հակառակը կը փափաքի:

Հոովմայ աթոռին գիմուներ եղած են այս մասին:

— Իւշ քիլիսէի Ս. Յովհաննէս վանքը, 50 հոգիէ բաղկացեալ թուրք զինւորներու շոկատ մը գրաւած և անկէ գուրս վանած է բոլոր կրօնաւորներն:

— Բազմապիսի Խմբագրապետ Վերապատուելի Հ. Երեմեան, իր առողջութիւնը պարմանելու համար Պօլիս գնացած և Բերայի Միսթարեանց վարժարանը հիւրնկալուած է:

Նաս մը բանասէր և ուսումնասէր ազգայիններ անոր այցելել փութացած

են, և հետզհետե կ'աւելնայ այդելուաց թիւը:

— Վսեմ. Տր. Յարութիւն Խան Թիւրեաքեան, 10 ոսկի զրկած է Պօլիս, կէսը հանգուցեալ հայ ուսուցիչ Գաւրի Սարգըսեանի որդոց և մնացեալը իր ծննդավայրին, Կիսարիոյ Թալաո գիւղին, երկսեռ վարժարանին յատկացնելու համար:

Թ Ի Փ Ե Ր

Մեր առաջիկայ թիւէն սկսեալ՝ մաս առ մաս հրատարակել պիտի սկսինք «Արշաղոյն» կարեւոր աշխատակիցներէն միոյն ի հրատարակութիւն՝ մեզի զրկած հրահանգի մէկ հեղինակութիւնը — Թիւրքեր:

Այս աշխատութիւնը եզրագտական ուսումներուն մէջ գտնուողներու ոմանց վարուց, նկարագրներուն, և անոնց այլ և այլ շրջանակներու մէջ ի գործ դրած վարպետորդի և փաստակար շարժումներուն տիպարը աչքի առջև ունենալով, հեղինակը քիչ մը զուարճարանական ոճով հարուստ ծեւու և այդպէսով ուղղութեան հրաւիրելու համար պատրաստած է:

Խնամեալ աշխատութիւն մ'է և մանաւանդ իր սահուն ոճովը և հետաքրքրական յորինուածութիւնն ու պարունակութեամբը վստահ ենք թէ՛ մեր ընթերցողաց ու շահութիւնը պիտի գրաւէ և իր մասնաւոր շահեկանութիւնը պիտի ունենայ:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

1. ԱՄԵՆԱՀՆԱԶԱՆԻ և ԱՄԵՆՈՒՈՆԱՐՀԾԱՌԱՆ:
2. ԱՄՈՒՄՆՈՒԹԵՆԷ ԱՌԱՋ . . . ԵՒ ԿՈՐՍՈՒԱԾ ՄԱՆԿԻՆ:
3. ԿԵՂՆՎԱՃԱՌԱԿԱՆԸ ԵՒ ԽՄԽՄԸ ԺՈՂՈՎԻ ՄԸ ՄԷՉ:
4. ՀԱՃԻ ՄԱՌԻՆՈՍ ՏՈՒՏՈՒՆ, ԻՐ ԳԻՏԱԿԸ ԵՒ ՀՈՎԱՆՈՅԸ:
5. ԿԵՂՆՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ:
6. ՀՐԱՇԱՆԵԱՅ ՀԵՂԻՆԱԿԸ ՄԱԳՆԻՍՏԱՑՄ . . .
7. ԹԵԹԵՒ ՍՈՒԿ ԱՏԵՆԱԳՈՒՐԸ ԵՒ ՏԻՊՈՐ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԸ:
8. ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ԹԻՓԵՐՈՒՄ ՀԱՌԱՔԱՄԻՈՅ:
9. Ս. ԵՐՈՒ ԳՈՒՄԱՐՈՒՄԸ:
10. ԹԻՆԹԻՆԸ:

ՀՆԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱԿԱՆՈՒԹԻՒՆ  
ԿԻՐԱՐԿԻ 17 ՅՈՒՆԻՍ 1900

560	8616	6057	1835	2685	621	355
1314	1420	1857	2961	3876	3886	3708
4032	4714	5027	5179	6478	6829	6877
6506	6888	6909	7197	9013	9102	

Գ Ա Ֆ Է Ս Օ Ք Ա

Տիպարան Կոտանեան պատիւ ունի ծանուցանել Արդոյ հասարակութեան թէ՛ վերջերս սկսած է իւր Փազար-Մուրի խանութին մէջ պատրաստել Եփեմէի սուրճին ամենաբարձր և անխաղախ տեսակէն իրեն գիմող յաճախորդներ օրսան 16 զրջ սղջի հաշուով, զուտ քաջէ պիտի կրտան գնել. կըսոյ մէջ այ ուղղամտութիւն գտնելով:

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

ՆՈՐԱԿԱԶՄ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

«ԱՐՇԱԼՈՅՍԻ»

ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻԼ ԱԶԻԶԻ ՍԿԻԶԲԸ

Օսնակի ղեղարակին ղիւնացի փողոցին մէջ:

Տպարանը բաց պիտի ըլլայ ամեն օր, առաւօտեան ժամը 7էն մինչև երեկոյեան ժամը 8:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ մէջ, մաքուր և ճաշակաւոր պատրաստուելու պայմանաւ, կ'ընդունուին:

Այցեխարտեր, Երջարտարաններ, Գիրքեր, Հրատարակութիւններ, Մանկագրքեր, Տեղեկագիրներ, Կրթական գիրքեր, Տոմարներ և այլ և այլ վաճառականական յանձնարարութիւններ:

Ամենակատարեալ ճշգրտագոյնութիւն և չափաւոր գին:

ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՆԻՒԿ ԵՆ:

ԿՈՊԷՌՊԵՆԼԵԱՆ

ԵՒ ԸՆԿԵՐ:

ՆՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱՏՈՒՆ ԵՒ ՆԿԱՐՉԱՏՈՒՆ

Տասներկու տարիներ շարունակ կարեւոր լուսանկարչատուններու մէջ աշխատելով, արհեստին ամեն ճիւղերը լաւ մշակած և վարձաւարութիւն ստացած է:

Պոլսոյ մէջ Ապտուլլահ Երբարց տանի ինչպէս և ուրիշ մի քանի ծանօթ տուններու, քաղաքի մէջ վերջին անգամ Լէքեման գործատան մէջ ամենակարեւոր պաշտօնը վարած, այժմ առանձին գործատեղի մը կը հիմնէ Էօպսէֆիոյ Շարխա Գաւմէշ Օթէլ, ՇէֆէֆՍՍԻ ճիւղ գիմաց թիւ 3 արարթումնին երրորդ յարկը, ուր կը պատրաստէ լուսանկարներ, ինչպէս և գուրսը կուսովներ ի հարկին:

Ակրակահալան բնական մեծութեամբ: Կենդանագիրներ ամբողջական մի քանիսով որոնք երբէք չ'են աւրուիր:

Գունաւոր լուսանկարներ ամեն մեծութեամբ բնական գոյներով միջնաքարի: Իւրաներկ և ջրաներկ պատկերներ և ընդ լուսանկարի և պատկերահանութեան վերաբերեալ յանձնարարութիւններ կ'ընդունի ոչքաշ, ճեպիքարքան և ընդ:

Իրեն գիմող յաճախորդներն հանել տուած լուսանկարներուն հետ միեւնոյնէն գունաւոր մը նուէր պիտի ստանան, որ նորութիւն մէ:

Տ Հ Ի Մ Ի Չ Ո Ւ Ա Լ Լ Ա Յ Յ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԵՆ ՀԱՐՈՒՍՏԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ

ԵՐԱՇԽԱՌՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամեննէն աւելի շահաբաժինները:

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ինչպատ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ որ և է ընկերութենէ մէկ միլեար աւելի է:

Ս. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ

ՏՕՔԹ. Ա. Յ. ՔԵՐԵՍՈՒՃԵԱՆ

Ի Շարխա Գոթ-Պէյ, թիւ 20

Իր ՁԻԻ խորհրդակցութիւնները ասկից վերջը, միայն ուրբաթ օրերը կես օրէ առաջ ժամը (ը. և.) 9էն 11 սրտած ըլլալով կը խնդրէ մեզմէ ծանուցանել զայդ, ի գիտութիւն իրեն գիմել ուղղ աղբատ հիւանդներու: 5—8

ՏԻՐԱՆ ՀԻՐՄԻՉԵԱՆ

Շարխա Մօնակէս Այրվիգորիս ղեղարակին ֆով:

Իրեն գիմող յոճախորդաց, տոկուն ապրանքներով և նորաձեւութեան համաձայն, ձեւաւոր հագուստներ պատրաստել կը խոտտանայ խիստ չափաւոր գներով:

Փորձի համար անգամ մը միայն հոն գիմողը, որտե գոհունակութեամբ պիտի մեկնի և ճաշակաւոր ու ձեւաւոր զգեստ ունենալու համար՝ դարձեալ Հիւրմըրզեանը պիտի փնտռէ: 7—8

ԳՐԵՆ ՈՒՅՈՂՆՍԵՐՈՒՆ

Գահիրէի և շրջակայից գրասէր Հայ հասարակութեան ղիւրութիւն մը տալու մտօք կը ծանուցուի թէ Հայերէն ամեն գիրք, (Իսլամական, Գրքագրական, Գիտական, Գրական Արտեսական, Բանասիրական, Վիպական եւ այլն) որ հրատարակուած են և կը հրատարակուին Պոլիս, Իզմիր, Երուսաղէմ, Թիֆլիզ, Վենետիկ ու Վիեննա, կարելի է գիրքամատչելի պայմաններով ձեռք բերել՝ գիմելով Տիար Կ. Նաւասարդեանի, Գալստեան վարժարան Հայոց ի Գահիրէ:

ՏՕՔԹ. ԺՈՐԺ Փ. ԷՎԼԻԱՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Ապրիլ Շարխա Գոթարի Թիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հասակի յարմար ընտիր ապրանքներով կեղծ սկզաններ:

Կը զագրեցնէ վայրկենապէս սկզայիցաւորը, ամբողջական նորագոյն մեթօտով իւր պատրաստած զեղերով:

Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած սկզաններուն տոկունութիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երաշխաւորէ:

Վկայեալ աղբատներու ձրի դարմանում, ամեն օր կէսօրէ ետք ժամը 5—5:

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ